ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16-1»

ք. Երևան

<< 30 >> սեպտեմբերի 2019թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲ և «ՈՒՅՈՒՏ ՎԵՐԵԼԱԿ» ՍՊ ընկերությունները /կոնսորցիում/ (այսուհետև՝ Վաճառող) ի դեմս «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲ ընկերության տնօրեն Ռ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության և 17.07.2019 թվականին կնքված համատեղ գործունեության N 19/16 պայմանագրի հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ԳՆՈՐԴՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 ԳՆՈՐԴԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 ՎԱՃԱՌՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 ՎԱՃԱՌՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 159200000 (մեկ հարյուր հիսունինը միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի (համաձայնագրի) վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը

համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[32] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ),

կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի քաղաքապետարան	«ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ք. Եղեգնաձոր,Շահումյան 20
Կենտրոնական գանձապետարան	«ԱՇԲ» ՓԲԸ Եղեգնաձորի մ/ճ
Հ/Հ 900012000635	Հ/Հ 2475800875490000
ՀՎՀՀ 02593108	ՀՀՎՀ 08908014
Է. Կիրակոսյան ----------	Ռ. Գրիգորյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 1
«30» սեպտեմբերի 2019թ. կնքված
«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	42414700	Աճառյան փ.44$_2$, Շինարարների 15/2$_2$ 2-րդ մուտք վերելակի ձեռքբերում (տեղադրումով) Մոզիլեվ լիֆտմաշ	ОАО «Могилев лифтмаш» РБ	Վերելակ վերին մեքենայական սրահով *Տիպը* մարդատար *Հորանի չափը* 1550x1700 *Դռների բացվածքը* կենտրոնական բացվող 700մմ *Դռների բարձրություն* 2000 մմ *Գլխավոր էլեկտրաշարժիչը* VVF համակարգ *Արագությունը* 1մ/վ *Բեռնատարողությունը* ոչ պակաս 400 կգ *Կանգառների թիվը* 12 *Վերին հարկի բարձրությունը*	հատ	9450000	18900000	2	Աճառյան 44$_2$, Շինարարների 15/2$_2$	2	Նախընտրելի ժամկետը՝ Պայմանագիրը համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 90-րդ օրացուցային օրը.

				3500 մմ *Բարձրացման բարձրությունը* 33000 մմ *Հարկերի դռները* փոշեներկված *Կանչի ապարատ* հակավանդալ լույսով *Հարկային ցուցիչ /1-ին հարկում/* լուսային ՎԵՐԵԼԱԿԻ ԽՑԻԿԸ *Պատերը և դռները* փոշեներկված *հրամանի վահանակը* չժանգոտող մետաղից, կանչի կոճակների հասանելիությունը հատակից /900-1200մմ/ նախատեսված սահմանափակ կարողությամբ անձանց համար *կոճակները* հակավանդալ, լույսով, սահմանափակ տեսողությամբ անձանց համար /Բրայլի շրիֆտ/ *հարկային ցուցիչ* ձայնային ազդանշանով *հատակը* տարկետ *Պետք է ունենա՝* - բռնակ, - Ֆոտովարագույր, - խցիկի դռների VVF							

				համակարգ, -կանչի կոճակ -լեդ լուսավորություն Վերելակի փոխարինում. - վերելակի ապամոնտաժում և հանձնում - վերելակի տեղադրում - հարկերի դռների շրջանակների ապամոնտաժում և նորի տեղադրում /լամինատ/ - շեմի նորոգում -հակակշռի ուղղորդիչների փոխարինում <u>Վերելակներների փոխարինման անհրաժեշտ պայմաններ.</u> - Կազմակերպությունը պետք է առջնորդվի ՀՀ կառավարության 09.02.2006թ. թիվ 692-Ն որոշումով՝ ուժի մեջ մտած «Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների» Տեխնիկական կանոնակարգի համաձայն - Կազմակերպությունը պետք է ունենա համապատասխան							

				լիցենզիա: - Կազմակերպությունը փոխարինման ավարտից հետո պետք է ներկայացնի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն: *Երաշխիք, ամիս* 24 /տեղադրումից հետո/							
2	42414700	Իսահակյան թ. 3/1$_2$, Խաղաղ Դոնի 31$_2$, 11 մուտք, Խաղաղ Դոնի 1$_2$, 12, Արարատյան 62/1$_2$, 1մուտք,Շիրազի 36$_2$, 2մուտք վերելակի ձեռքբերում (տեղադրումով) Մոգիլեվ լիֆտմաշ	ՕԱՕ «Могилев лифтмаш» ՊԲ	Վերելակ վերին մեքենայական սրահով *Տիպը* մարդատար *Հորանի չափը* 1550x1700 *Դռների բացվածքը* կենտրոնական բացվող 700մմ *Դռների բարձրություն* 2000 մմ *Գլխավոր էլեկտրոշարժիչը* VVF համակարգ *Արագությունը* 1մ/վ *Բեռնատարողությունը* ոչ պակաս 400 կգ *Կանգառների թիվը* 9 *Վերին հարկի բարձրությունը* 3500 մմ *Բարձրացման*	հատ	8620000	43100000	5	Իսահակյան թ. 3/1$_2$, Խաղաղ Դոնի 31$_2$, 11 մուտք, Խաղաղ Դոնի 1$_2$, 12, Արարատյան 62/1$_2$, 1մուտք,Շիրազի 36$_2$, 2մուտք	5	Նախընտրելի ժամկետը՝ Պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 90-րդ օրացուցային օրը.

				բարձրությունը 24000 մմ *Հարկերի դռները* փոշեներկված *Կանչի ապարատ* հակավանդալ լույսով *Հարկային ցուցիչ /1-ին հարկում/* լուսային ՎԵՐԵԼԱԿԻ ԽՑԻԿԸ *Պատերը և դռները* փոշեներկված *հրամանի վահանակը* չժանգոտող մետաղից, կանչի կոճակների հասանելիությունը հատակից /900-1200մմ/ նախատեսված սահմանափակ կարողությամբ անձանց համար *կոճակները* հակավանդալ, լույսով, սահմանափակ տեսողությամբ անձանց համար /Բրայլի շրիֆտ/ *հարկային ցուցիչ* ձայնային ազդանշանով *հատակը* տարկետ *Պետք է ունենա՝* - բռնակ, - Ֆոտովարագույր, - խցիկի դռների VVF համակարգ,							

				-կանչի կոճակ -լեդ լուսավորություն Վերելակի փոխարինում. - վերելակի ապամոնտաժում և հանձնում - վերելակի տեղադրում - հարկերի դռների շրջանակների ապամոնտաժում և նորի տեղադրում /լամինատ/ - շեմի նորոգում -հակակշռի ուղղորդիչների փոխարինում <u>Վերելակներների փոխարինման անհրաժեշտ պայմաններ.</u> - Կազմակերպությունը պետք է առջնորդվի ՀՀ կառավարության 09.02.2006թ. թիվ 692-Ն որոշումով՝ ուժի մեջ մտած «Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների» Տեխնիկական կանոնակարգի համաձայն - Կազմակերպությունը պետք է ունենա							

				համապատասխան լիցենզիա: - Կազմակերպությունը փոխարինման ավարտից հետո պետք է ներկայացնի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն: *Երաշխիք, ամիս* 24 /տեղադրումից հետո/							
3	42414700	Հ.Էմին 62 վերելակի ձեռքբերում (տեղադրումով) Մոգիլեվ լիֆտմաշ	ОАО «Могилев лифтмаш» РБ	Վերելակ վերին մեքենայական սրահով *Տիպը* մարդատար *Հորանի չափը* 1550x1700 *Դռների բացվածքը* կենտրոնական բացվող 700մմ *Դռների բարձրություն* 2000 մմ *Գլխավոր էլեկտրոշարժիչը* VVF համակարգ *Արագությունը* 1մ/վ *Բեռնատարողությունը* ոչ պակաս 400 կգ *Կանգառների թիվը* 14 *Վերին հարկի բարձրությունը* 3500 մմ	հատ	9600000	9600000	1	Ք. Երևան Հ.Էմին 62	1	Նախընտրելի ժամկետը՝ Պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 90-րդ օրացուցային օրը.

				Բարձրացման բարձրությունը 39000 մմ *Հարկերի դռները* փոշեներկված *Կանչի ապարատ* հակավանդալ լույսով *Հարկային ցուցիչ /1-ին հարկում/* լուսային ՎԵՐԵԼԱԿԻ ԽՑԻԿԸ *Պատերը և դռները* փոշեներկված *հրամանի վահանակը* չժանգոտող մետաղից, կանչի կոճակների հասանելիությունը հատակից /900-1200մմ/ նախատեսված սահմանափակ կարողությամբ անձանց համար *կոճակները* հակավանդալ, լույսով, սահմանափակ տեսողությամբ անձանց համար /Բրայլի շրիֆտ/ *հարկային ցուցիչ* ձայնային ազդանշանով *հատակը* տարկետ *Պետք է ունենա՝* - բռնակ, - Ֆոտովարագույր, - խցիկի դռների VVF համակարգ,							

				-կանչի կոճակ -լեդ լուսավորություն Վերելակի փոխարինում. - վերելակի ապամոնտաժում և հանձնում - վերելակի տեղադրում - հարկերի դռների շրջանակների ապամոնտաժում և նորի տեղադրում /լամինատ/ - շեմի նորոգում -հակակշռի ուղղորդիչների փոխարինում <u>Վերելակներների փոխարինման անհրաժեշտ պայմաններ.</u> - Կազմակերպությունը պետք է առջնորդվի ՀՀ կառավարության 09.02.2006թ. թիվ 692-Ն որոշումով՝ ուժի մեջ մտած «Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների» Տեխնիկական կանոնակարգի համաձայն - Կազմակերպությունը պետք է ունենա համապատասխան							

				լիցենզիա: - Կազմակերպությունը փոխարինման ավարտից հետո պետք է ներկայացնի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն: *Երաշխիք, ամիս* 24 /տեղադրումից հետո/							
6	42414700	Սարյան 38$_2$, Սարյան 36$_2$ վերելակի ձեռքբերում (տեղադրումով) Մոգիլեվ լիֆտմաշ	ОАО «Могилев лифтмаш» РБ	Վերելակ վերին մեքենայական սրահով *Տիպը* մարդատար *Հորանի չափը* 1550x1700 *Դռների բացվածքը* կենտրոնական բացվող 700մմ *Դռների բարձրություն* 2000 մմ *Գլխավոր էլեկտրոշարժիչը* VVF համակարգ *Արագությունը* 1մ/վ *Բեռնատարողությունը* ոչ պակաս 400 կգ *Կանգառների թիվը* 16 *Վերին հարկի բարձրությունը* 3500 մմ	հատ	10950000	21900000	2	Ք. Երևան Սարյան 38$_2$, Սարյան 36$_2$	2	Նախընտրելի ժամկետը՝ Պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 90-րդ օրացուցային օրը.

				Բարձրացման բարձրությունը 45000 մմ *Հարկերի դռները* փոշեներկված *Կանչի սպարատ* հակավանդալ լույսով *Հարկային ցուցիչ / 1-ին հարկում/* լուսային ՎԵՐԵԼԱԿԻ ԽՑԻԿԸ *Պատերը և դռները* փոշեներկված *հրամանի վահանակը* չժանգոտող մետաղից, կանչի կոճակների հասանելիությունը հատակից /900-1200մմ/ նախատեսված սահմանափակ կարողությամբ անձանց համար *կոճակները* հակավանդալ, լույսով, սահմանափակ տեսողությամբ անձանց համար /Բրայլի շրիֆտ/ *հարկային ցուցիչ* ձայնային ազդանշանով *հատակը* տարկետ *Պետք է ունենա՝* - բռնակ, - Ֆոտովարագույր, - խցիկի դռների VVF համակարգ,							

				-կանչի կոճակ -լեդ լուսավորություն Վերելակի փոխարինում. - վերելակի ապամոնտաժում և հանձնում - վերելակի տեղադրում - հարկերի դռների շրջանակների ապամոնտաժում և նորի տեղադրում /լամինատ/ - շեմի նորոգում -հակակշռի ուղղորդիչների փոխարինում Վերելակներների փոխարինման անհրաժեշտ պայմաններ. - Կազմակերպությունը պետք է առջնորդվի ՀՀ կառավարության 09.02.2006թ. թիվ 692-Ն որոշումով՝ ուժի մեջ մտած «Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների» Տեխնիկական կանոնակարգի համաձայն - Կազմակերպությունը պետք է ունենա							

				համապատասխան լիցենզիա: - Կազմակերպությունը փոխարինման ավարտից հետո պետք է ներկայացնի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն: *Երաշխիք. ամիս* 24 /տեղադրումից հետո/							
7	42414700	Անդրանիկի 20շ, Անդրանիկի 22շ վերելակի ձեռքբերում (տեղադրումով) Մոգիլեվ լիֆտմաշ	ОАО «Могилев лифтмаш» РБ	Վերելակ վերին մեքենայական սրահով *Տիպը* մարդատար *Հորանի չափը* 1550x1750 *Դռների բացվածքը* կենտրոնական բացվող 700մմ *Դռների բարձրություն* 2000 մմ *Գլխավոր էլեկտրոշարժիչը* VVF համակարգ *Արագությունը* 1մ/վ *Բեռնատարողությունը* ոչ պակաս 400 կգ *Կանգառների թիվը* 9 *Վերին հարկի բարձրությունը* 3500 մմ *Բարձրացման*	հատ	8500000	17000000	2	Ք. Երևան Անդրանիկի 20շ , Անդրանիկի 22շ	2	Նախընտրելի ժամկետը՝ Պայմանագիրը համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 90-րդ օրացուցային օրը.

				Բարձրությունը 24000 մմ *Հարկերի դռները* փոշեներկված *Կանչի սպարատ* հակավանդալ լույսով *Հարկային ցուցիչ /1-ին հարկում/* լուսային ՎԵՐԵԼԱԿԻ ԽՑԻԿԸ *Պատերը և դռները* փոշեներկված *հրամանի վահանակը* չժանգոտող մետաղից, կանչի կոճակների հասանելիությունը հատակից /900-1200մմ/ նախատեսված սահմանափակ կարողությամբ անձանց համար *կոճակները* հակավանդալ, լույսով, սահմանափակ տեսողությամբ անձանց համար /Բրայլի շրիֆտ/ *հարկային ցուցիչ* ձայնային ազդանշանով *հատակը* տարկետ *Պետք է ունենա՝* - բռնակ, - Ֆոտովարագույր, - խցիկի դռների VVF համակարգ,							

				-կանչի կոճակ -լեդ լուսավորություն Վերելակի փոխարինում. - վերելակի ապամոնտաժում և հանձնում - վերելակի տեղադրում - հարկերի դռների շրջանակների ապամոնտաժում և նորի տեղադրում /լամինատ/ - շեմի նորոգում -հակակշռի ուղղորդիչների փոխարինում <u>Վերելակներների փոխարինման անհրաժեշտ պայմաններ.</u> - Կազմակերպությունը պետք է առջնորդվի ՀՀ կառավարության 09.02.2006թ. թիվ 692-Ն որոշումով՝ ուժի մեջ մտած «Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների» Տեխնիկական կանոնակարգի համաձայն - Կազմակերպությունը պետք է ունենա							

				համապատասխան լիցենզիա: - Կազմակերպությունը փոխարինման ավարտից հետո պետք է ներկայացնի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն: *Երաշխիք. ամիս* 24 /տեղադրումից հետո/							
8	42414700	Դ.Մալյան 2շ 2մուտք վերելակի ձեռքերում (տեղադրումով) Մոգիլեվ լիֆտմաշ	ОАО «Могилев лифтмаш» РБ	Վերելակ վերին մեքենայական սրահով *Տիպը* մարդատար *Հորանի չափը* 1450x1650 *Դռների բացվածքը* կենտրոնական բացվող 700մմ *Դռների բարձրություն* 2000 մմ *Գլխավոր էլեկտրոշարժիչը* VVF համակարգ *Արագությունը* 1մ/վ *Բեռնատարողությունը* ոչ պակաս 400 կգ *Կանգառների թիվը* 12 *Վերին հարկի բարձրությունը* 3500 մմ	հատ	9700000	9700000	1	Ք. Երևան Դ.Մալյան 2շ 2մ	1	Նախընտրելի ժամկետը՝ Պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 90-րդ օրացուցային օրը.

				Բարձրացման բարձրությունը 33000 մմ *Հարկերի դռները* փոշեներկված *Կանչի ապարատ* հակավանդալ լույսով *Հարկային ցուցիչ /1-ին հարկում/* լուսային ՎԵՐԵԼԱԿԻ ԽՑԻԿԸ *Պատերը և դռները* փոշեներկված *հրամանի վահանակը* չժանգոտող մետաղից, կանչի կոճակների հասանելիությունը հատակից /900-1200մմ/ նախատեսված սահմանափակ կարողությամբ անձանց համար *կոճակները* հակավանդալ, լույսով, սահմանափակ տեսողությամբ անձանց համար /Բրայլի շրիֆտ/ *հարկային ցուցիչ* ձայնային ազդանշանով *հատակը* տարկետ *Պետք է ունենա՝* - բռնակ, - Ֆոտովարագույր, - խցիկի դռների VVF							

				համակարգ, -կանչի կոճակ -լեդ լուսավորություն Վերելակի փոխարինում. - վերելակի ապամոնտաժում և հանձնում - վերելակի տեղադրում - հարկերի դռների շրջանակների ապամոնտաժում և նորի տեղադրում /լամինատ/ - շեմի նորոգում -հակակշռի ուղղորդիչների փոխարինում <u>Վերելակներների փոխարինման անհրաժեշտ պայմաններ.</u> - Կազմակերպությունը պետք է առջնորդվի ՀՀ կառավարության 09.02.2006թ. թիվ 692-Ն որոշումով՝ ուժի մեջ մտած «Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների» Տեխնիկական կանոնակարգի համաձայն - Կազմակերպությունը							

				պետք է ունենա համապատասխան լիցենզիա: - Կազմակերպությունը փոխարինման ավարտից հետո պետք է ներկայացնի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն: *Երաշխիք, ամիս* 24 /տեղադրումից հետո/							
9	42414700	Գայի փ.41$_2$ վերելակի ձեռքբերում (տեղադրումով) Մոգիլեվ լիֆտմաշ	ОАО «Могилевлифтмаш» РБ	Վերելակ վերին մեքենայական սրահով *Տիպը* մարդատար *Հորանի չափը* 1450x1650 *Դռների բացվածքը* կենտրոնական բացվող 700մմ *Դռների բարձրություն* 2000 մմ *Գլխավոր էլեկտրոշարժիչը* VVF համակարգ *Արագությունը* 1մ/վ *Բեռնատարողությունը* ոչ պակաս 400 կգ *Կանգառների թիվը* 9 *Վերին հարկի բարձրությունը*	հատ	8300000	8300000	1	ՀՀ. Երևան Գայի փ.41$_2$	1	Նախընտրելի ժամկետը՝ Պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 90-րդ օրացուցային օրը.

				3500 մմ *Բարձրացման բարձրություն* 24000 մմ *Հարկերի դռները* փոշեներկված *Կանչի սպասարտ* հակավանդալ լույսով *Հարկային ցուցիչ /1-ին հարկում/* լուսային ՎԵՐԵԼԱԿԻ ԽՑԻԿԸ *Պատերը և դռները* փոշեներկված *հրամանի վահանակը* չժանգոտող մետաղից, կանչի կոճակների հասանելիությունը հատակից /900-1200մմ/ նախատեսված սահմանափակ կարողությամբ անձանց համար *կոճակները* հակավանդալ, լույսով, սահմանափակ տեսողությամբ անձանց համար /Բրայլի շրիֆտ/ *հարկային ցուցիչ* ձայնային ազդանշանով *հատակը* տարկետ *Պետք է ունենա՝* - բռնակ, - Ֆոտովարագույր,							

				- խցիկի դռների VVF համակարգ, -կանչի կոճակ -լեդ լուսավորություն Վերելակի փոխարինում. - վերելակի ապամոնտաժում և հանձնում - վերելակի տեղադրում - հարկերի դռների շրջանակների ապամոնտաժում և նորի տեղադրում /լամինատ/ - շեմի նորոգում -հակակշռի ուղղորդիչների փոխարինում <u>Վերելակներների փոխարինման անհրաժեշտ պայմաններ.</u> - Կազմակերպությունը պետք է առջնորդվի ՀՀ կառավարության 09.02.2006թ. թիվ 692-Ն որոշումով՝ ուժի մեջ մտած «Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների» Տեխնիկական կանոնակարգի համաձայն							

				- Կազմակերպությունը պետք է ունենա համապատասխան լիցենզիա: - Կազմակերպությունը փոխարինման ավարտից հետո պետք է ներկայացնի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն: *Երաշխիք, ամիս* 24 /տեղադրումից հետո/							
10	42414700	Նժդեհի 27/1շ 1մուտք, Համբարձումյան 97շ վերելակի ձեռքբերում (տեղադրումով) Մոգիլեվ լիֆտմաշ	ОАО «Могилев лифтмаш» РБ	Վերելակ վերին մեքենայական սրահով *Տիպը* մարդատար *Հորանի չափը* 1550x1700 *Դռների բացվածքը* կենտրոնական բացվող 700մմ *Դռների բարձրություն* 2000 մմ *Գլխավոր էլեկտրոշարժիչը* VVF համակարգ *Արագությունը* 1մ/վ *Բեռնատարողությունը* ոչ պակաս 400 կգ *Կանգառների թիվը* 10	հատ	9250000	18500000	2	Ք. Երևան, Նժդեհի 27/1շ 1մուտք, Համբարձումյան 97շ	2	Նախընտրելի ժամկետը՝ Պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 90-րդ օրացուցային օրը.

				Վերին հարկի բարձրությունը 3500 մմ *Բարձրացման բարձրությունը* 27000 մմ *Հարկերի դռները* փոշեներկված *Կանչի սպարատ* հակավանդալ լույսով *Հարկային ցուցիչ /1-ին հարկում/* լուսային ՎԵՐԵԼԱԿԻ ԽՑԻԿԸ *Պատերը և դռները* փոշեներկված *հրամանի վահանակը* չժանգոտող մետաղից, կանչի կոճակների հասանելիությունը հատակից /900-1200մմ/ նախատեսված սահմանափակ կարողությամբ անձանց համար *կոճակները* հակավանդալ, լույսով, սահմանափակ տեսողությամբ անձանց համար /Բրայլի շրիֆտ/ *հարկային ցուցիչ* ձայնային ազդանշանով *հատակը* տարկետ *Պետք է ունենա՝*							

				- բոնակ, - Ֆոտովարագույր, - խցիկի դռների VVF համակարգ, -կանչի կոճակ -լեդ լուսավորություն Վերելակի փոխարինում. - վերելակի ապամոնտաժում և հանձնում - վերելակի տեղադրում - հարկերի դռների շրջանակների ապամոնտաժում և նորի տեղադրում /լամինատ/ - շեմի նորոգում -հակակշռի ուղղորդիչների փոխարինում <u>Վերելակներների փոխարինման անհրաժեշտ պայմաններ.</u> - Կազմակերպությունը պետք է առջնորդվի ՀՀ կառավարության 09.02.2006թ. թիվ 692-Ն որոշումով՝ ուժի մեջ մտած «Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների» Տեխնիկական կանոնակարգի համաձայն							

				- Կազմակերպությունը պետք է ունենա համապատասխան լիցենզիա: - Կազմակերպությունը փոխարինման ավարտից հետո պետք է ներկայացնի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն: *Երաշխիք. ամիս* 24 /տեղադրումից հետո/							
12	42414700	Թբիլիսյան խճ.1$_2$ վերելակի ձեռքբերում (տեղադրումով) Մոգիլեվ լիֆտմաշ$_2$	ОАО «Могилев лифтмаш» РБ	Վերելակ վերին մեքենայական սրահով *Տիպը* մարդատար *Հորանի չափը* 1700x2500 *Դռների բացվածքը* կենտրոնական բացվող 700մմ *Դռների բարձրություն* 2000 մմ *Գլխավոր էլեկտրոշարժիչը* VVF համակարգ *Արագությունը* 1մ/վ *Բեռնատարողությունը* 630 կգ *Կանգառների թիվը* 16	հատ	12200000	12200000	1	Ք. Երևան Թբիլիսյան խճ.1$_2$	1	Նախընտրելի ժամկետը՝ այմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու վանից մինչև 90-րդ բացուցային օրը.

				Վերին հարկի բարձրությունը 3500 մմ *Բարձրացման բարձրությունը* 45000 մմ *Հարկերի դռները* փոշեներկված *Կանչի սպարատ* հակավանդալ լույսով *Հարկային ցուցիչ /1-ին հարկում/* լուսային ՎԵՐԵԼԱԿԻ ԽՑԻԿԸ *Պատերը և դռները* փոշեներկված *հրամանի վահանակը* չժանգոտող մետաղից, կանչի կոճակների հասանելիությունը հատակից /900-1200մմ/ նախատեսված սահմանափակ կարողությամբ անձանց համար *կոճակները* հակավանդալ, լույսով, սահմանափակ տեսողությամբ անձանց համար /Բրայլի շրիֆտ/ *հարկային ցուցիչ* ձայնային ազդանշանով *հատակը* տարկետ *Պետք է ունենա՝*							

				- բոնակ, - Ֆոտովարագույր, - խցիկի դռների VVF համակարգ, -կանչի կոճակ -լեդ լուսավորություն Վերելակի փոխարինում. - վերելակի ապամոնտաժում և հանձնում - վերելակի տեղադրում - հարկերի դռների շրջանակների ապամոնտաժում և նորի տեղադրում /լամինատ/ - շեմի նորոգում -հակակշռի ուղղորդիչների փոխարինում <u>Վերելակներների փոխարինման անհրաժեշտ պայմաններ.</u> - Կազմակերպությունը պետք է առջնորդվի ՀՀ կառավարության 09.02.2006թ. թիվ 692-Ն որոշումով՝ ուժի մեջ մտած «Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների» Տեխնիկական կանոնակարգի համաձայն							

				- Կազմակերպությունը պետք է ունենա համապատասխան լիցենզիա: - Կազմակերպությունը փոխարինման ավարտից հետո պետք է ներկայացնի վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն: *Երաշխիք, ամիս* 24 /տեղադրումից հետո/							

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012000635
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ
ք. Եղեգնաձոր,Շահումյան 20
«ԱՇԲ» ՓԲԸ Եղեգնաձորի մ/ճ
Հ/Հ 2475800875490000
ՀՀՎՀ 08908014

Ռ. Գրիգորյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«30» սեպտեմբերի 2019թ. կնքված
«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												ՀՀ դրամ
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1-3, 6-10, 12	42414700	վերելակներ	------	------	------	------	------	------	------	159200000	159200000	159200000	159200000	159200000	159200000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով:*

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012000635
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ
ք. Եղեգնաձոր, Շահումյան 20
«ԱՇԲ» ՓԲԸ Եղեգնաձորի մ/ճ
Հ/Հ 2475800875490000
ՀՀՎՀ 08908014

Ռ. Գրիգորյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«30» սեպտեմբերի 2019թ. կնքված
«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«30» սեպտեմբերի 2019թ. կնքված
«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը
Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն